



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՄԷ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

№ 86

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ


№ 86

ԻՍ. ՏԵՐ-ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԽԱՂՈՂԻ ՎԱԶԵՐԻ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

ՏԵԽՆԻԿԱ-ՑԵՆՍԱԼԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ — 1930



ՀԱՅԿ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՑ

№ 86

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 86

634.8:632

ԻՍ. ՏԵՐ-ՆԵՐՍԻՍՅԱՆ


8
Lrny.

632.4:634.8

ԽԱՂՈՂԻ ՎԱԶԵՐԻ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ

A 4427
ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ



ՏԵՐ-ՆԵՐՍԻՍՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1930

Հրատ. № 1237

Գրառույ. № 4040 (բ) Պատ. № 262 Տիրաժ 5000

Պետհրատի Յերկրորդ Տպարան Յերևանում

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՆԱՍՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

I. ԻՆՁԻՑ ԵՆ ԱՌԱՋ ԳԱԼԻՍ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շատերը տեսած կլինեն, վոր այգիներում, դաշտերում, առուների յեզրերին, արոտներում ու հանդերում անձրևներից հետո առաջ են դալիս բազմաթիվ անպետք սոււնկեր, վորոնք միջանի որվա մեջ բազմանում, մեծանում, հասնում են ու նորից վռնչանում:

Յեթե այդ սոււնկերից պոկենք և նրանց դիտենք կտեսնենք, վոր սոււնկի գլխարկի տակ սև փանգի նման փոշի յե առաջացել: Յեթե սոււնկը ձեռքի մեջ արորենք՝ ձեռքը կսևանա:

Այդ սև փոշին սոււնկի սերմերն են: Նրանք այնքան շատ են ու այնքան մանր, վոր նրանց հաշվելն անհնար է, իսկ այդ փոշու առանձին հատիկներն այնքան փոքր են, վոր հասարակ աչքով անտեսանելի լեն:

Սոււնկի միլիոնավոր սերմերից է կազմված այդ փոշին և կոչվում է սպոր: Սոււնկի սպորները հաստանալով տարածվում են ողի մեջ, միլիոններով և միլիարդներով, ազատ լողում ուղում և չերբ խոնավ տեղ են ընկնում, իսկույն աճում են ու նորից սոււնկ առաջացնում:

Սուռնկերի շատ ու շատ տեսակները կան։ Նրանց մի մասը ծլում, աճում և բազմանում են հողի վրա, հանդերում, դաշտերում, այգիներում և անտառներում, իսկ մի մասն ել ծլում, աճում ու զարգանում են ուրիշ բույսերի կանաչ մասերի վրա։ Այսպիսի սուռնկերը, վոր ծառերի ու բույսերի կանաչ մասերի վրա յեն զարգանում, կոչվում են պարազիտներ կամ մակաբույծեր։

Շատերը տեսած կլինեն ցորենի կամ գարու արտերում, վոր հասկերը ծաղկելուց հետո հատիկների տեղ սև մուր են տալիս։ Այդ սևացած հասկը հիվանդությունն է և կոչվում է «մրրիկ»։

«Մրրիկ»-ն առաջ է գալիս մի սուռնկից, վորի սպորներն ընկնելով սերմացու հատիկի վրա, ծլում և աճում են բույսի հետ ու նրա վրա իբրև պարազիտ ասլրելով՝ հասկի մեջ հատիկների տեղ մրրիկն են առաջացնում։

Նման պարազիտներ կամ մակաբույծեր են և խաղողի «չոռն» ու «սևը», վորոնց մասին ամեն մի այգեգործ գիտե և վորոնք այնքան մեծ վնասներ են հասցնում մեր այգիներին։

Սրանք ել պարազիտային սուռնկեր են և այդ սուռնկերի սպորներն ամենուրեք ողի մեջ միլիոններով ու միլիարդներով տարածված են, բայց

մենք նրանց չենք տեսնում, վարդինտե այդ սպորները չափազանց մանր են ու մեզ համար անտեսանելի:

Ահա դրանց և մի լերկու այլ միասատու միջատների մասին է, վոր մենք այս գրքովկում պիտի խոսենք և ցույց տանք նրանց դեմ պայքարելու միջոցները:

II. ԽԱՂՈՂԻ ՄԻԼԴԻՈՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ (ՋՈՌ)

Խաղողի միլիոնավոր կամ չորս հիլանդուլթյունը պարագիտալին սունկ է, վորի սպորները մեծ քանակովթյամբ տարածված են լինում ողի մեջ:

Այդ սպորներն ընկնում կամ նստում են խաղողի կանաչ տերեւների վրա և գարնան վերջերին ու ամրան ընթացքում, յեթե անձրև է գալիս կամ ցոլ է նստում տերեւների վրա ու չեղանակն ել տաք է լինում, այդ սպորներն ըսկսում են ծլել ու աճել:

Անող սպորի բարակ ծիլերը մտնում են տերեւի ներսի փափուկ մասերի մեջ, ճուղավորվում և տարածվում են տերեւի ներսում: Կարճ ժամանակամիջոցում, ընդամենը 5—6 որովա մեջ սունկը հասունանում է, դուրս գալիս տերեւի ծակոսիներից և առաջ բերում տերեւի ներքի կողմից սպիտակ կամ մոխրագույն փոշի:

Առաջացած այդ բծերը կամաց-կամաց մե-

ծանուծ են, լախանուծ և ավելի մուգ գույն ստանուծ ու վերջի-վերջո աչդ բծոտ տեղերը չորանուծ են, կարծես տերևը կարկտահար յեղած լինի: Շատ անգամ ել պարագիտն այնքան ուժեղ ե զարգանում, վոր վարակելով ամբողջ տերևը, չորացնում ե նրան:

Մենակ տերևները չեն, վոր վարակվում են աչդ հիվանդությամբ: Խոնավ տարիները պատահում ե, վոր բացի տերևներից հիվանդանում են նաև վազի մյուս կանաչ շիվերը, վողկույգները (ճիթերը) և ծաղիկները:

Յերբ ծաղիկներն ու վողկույգները հիվանդանում են, խաղողի հատիկները (գիլաները) մանր են մնում, դեղնում են ու չորանում:

Յերբ վազը միլդիու հիվանդությամբ վարակվել ե, այլևս նրան բժշկել չի կարելի, վորովհետև մենք տեսանք, վոր սպորի ծիլերը մտնում են տերևի ներսը և ներսում ել տարածվում: Իսկ յերբ հիվանդությունը ներսում տարածվել ե, այլևս նրա առաջն առնել չի կարելի, տերևը կամ վողկույգը պիտի չորանա: Իսկ մենք գիտենք, վոր չորացած տերևը, շիվը կամ վողկույգը կենդանացնել չի կարելի:

Աչդ պատճառով ել աչգիներում դեղերը սրսկում ենք վոչ թե չորացած կամ հիվանդացած մասերը բժշկելու, այլ հիվանդության տա-

ըածվելու առաջն առնելու համար կամ խաղողի
այգու գեռ չհիվանդացած մասերը հիվանդու-
թյունից պաշտպանելու համար:

Պարզ և ուրեմն, վոր այն միջոցները, վո-
րոնք դործ են ածվում միլիոնավի կամ չորիդեմ,
միայն նախադրուշացման կամ պաշտպանողա-
կան միջոցներ են, ճիշտ այնպես, ինչպես յերե-
խաների ծաղիկը կտրում են, վոր նա ծաղկով
չհիվանդանա:

III. ԻՆՉ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՅԵՎ ՅԵՐԲ ԿՈՎԵԼ ՄԻԼ- ԴԻՈՒԻ ԴԵՄ

Միլիոն հիվանդությունից վազը պաշտպա-
նելու համար, այգիները փոշոտում են բորդո-
յան հեղուկով: Այդ փոշոտումը պետք է կատա-
րել հիվանդության յերևալուց առաջ և յերբեք
չապասել, վոր հիվանդության նշանները յերևան
ու նոր միայն միջոցներ ձեռք առնել:

Շատերը հիվանդության նշաններ չնկատե-
լով սպասում են, հույս ունենալով, թե մի գու-
ցե հիվանդություն չլինի և գուր ծախսի տակ
չընկնեն, բայց յերբ հիվանդությունն սկսվում
է, արդեն ուշացած են լինում և քիչ ծախսը
խնայելով զրկվում են մեծ բերքից,

Դա իհարկե, ախալ է և անթույլատրելի:

Բորդոյան հեղուկով պետք է փոշոտել ա-

ռանց սպասելու հիվանդութեան նշաններն չե-
րեալուն: Փոշոտել պետք է զարնափն և ամառվա
ընթացքում 2 — 3 անգամ:

Առաջին անգամ պետք է փոշոտել, յերբ
նոր կանաչած շիվերի վրա 4—5 տերև եւ առաջ
յեկել, այսինքն մինչև ծաղկելը:

Յերկրորդ անգամ պետք է փոշոտել, յերբ
ծաղկելը վերջացել եւ և մանր պտուղներ են գո-
յացել (յերբ դորա յե դառել): Յերկրորդ փոշո-
տումը պետք է կատարել հուլիսի սկզբներին և
այս անգամ պետք է ինչքան կարելի յե լավ
փոշոտել:

Շատ անգամ հարկավոր եւ լինում նույնիսկ
չորրորդ անգամ փոշոտել, յեթե հուլիսին անձ-
րեններ են լինում, վորովհետեւ մենք տեսանք,
վոր սունկի սպորները զարգանում են, յերբ ընկ-
նում են խոնավ տերևների կամ վողկույզի վրա:

Յեթե այս բոլոր փոշոտումներն իր ժամա-
նակին և կանոնավոր կատարենք, կարող ենք ա-
պահով լինել, վոր միլիոնավ մեր այգիները չեն
հիվանդանա:

Յեթե փոշոտելուց հետո անձրև գա, լավ
կլինի մյուս ուր՝ տերևների չորանալուց հետո
նորից փոշոտել, վորովհետեւ անձրևները լվանում
են փոշոտած տերևները:

Բորդոյան հեղուկը պատրաստում են հե-

տեղալ ձևով: Վորեն փայտի տակառի մեջ լըց-
նում են (պղնձի աման չի կարելի) 6 վեդրո
շուր, վորի մեջ լուծում են 5 ֆունտ պղնձի
արջասպ (կապույտ քար, շիբ): Արջասպը ջրի
մեջ լուծելու (հալելու) համար լցնում են վորեն
տոպրակի մեջ և կախում ջրով լի տակառի մեջ
ու թողնում այդպես ամբողջ գիշերը: Գիշերվա
ընթացքում արջասպը բոլորովին լուծվում է ջրի
մեջ: Մի ուրիշ տակառում քիչ ջրով հանգցնում
են 3 ֆունտ թարմ, չհանգած կիր, կամաց-կա-
մաց շուր ածելով կրի վրա ու խառնելով, մին-
չև վոր ստացվի մածնի նման խառնուրդ: Կիրն
այդպես պատրաստելուց հետո անց են կացնում
մաղի կամ յերկաթի ցանցի միջով, վորպեսզի
կրի մեջ յեղած ավազը կամ մանր քարերը մա-
քրվեն և դրանից հետո այնքան շուր են ավե-
լացնում մաղով անցկացրած կրաշաղախի վրա,
վոր ստացվի 4 վեդրո կրաշուր:

Յերբ թե կրաշուրը և թե արջասպի լուծ-
վածքը պատրաստ ե, կրաշուրը բարակ շերտով
լցնում են արջասպի տակառի մեջ և վորեն փայ-
տով յարունակ խառնում պատրաստած դեղը:
Կրաշուրն արջասպի ջրի մեջ լցնելուց հետո ըս-
տացված խառնուրդը բաց կապտավուն է լինում,
յերկնքի գույնի նման: Պետք է անպայման կը-
րաշուրը լցնել արջասպի վրա և վոչ հակառակը:

Այսպիսով ստացվում է մի խառնուրդ, վորը բաղկացած է 10 վեդրո ջրից, 5 ֆունտ պղնձի արջասպից և 3 ֆունտ թարմ հանգցրած կրից:

Այսպես պատրաստած հեղուկը լցնում են սրսկիչ մեքենայի մեջ և սրսկում վազերն այնպես, վոր հեղուկը մանր հատիկներով ընկնի տերևների, վողկոլյգների և վազի բոլոր մասերի վրա հավասարապես: Սրսկիչ մեքենան չպետք է վազից շատ մոտ պահել, վորպեսզի տերևները չլվացվեն: Սրսկելու ժամանակ պետք է սրսկիչը պահել թփից մոտ մեկ արշին հեռավորության վրա, վոր մանր կաթիլներով ծածկվեն թե տերևները և թե վազի մյուս մասերը:

IV. ՈՒԴԻՈՒԾ ՇԻՎԱՆԴՈՒՅՑՈՒՆԸ (ՍԵՎ)

Ուդիում հիվանդութունը կամ խաղողի սեվը (թողը) դարձյալ սունկից է առաջ գալիս և մեծ վնասներ է հասցնում խաղողի այգիներին: Այս պարագիտային սունկի մանրիկ սպորները միլիարդներով տարածված են լինում ողի մեջ, այնպես, ինչպես և միդիոն և ընկնելով վազի կանաչ մասերի վրա, նույնպես վարակում են նրբան:

Տարբերութունը նրանումն է, վոր ուդիումի ուզերները ծլելով, իրենց բաբակ ծիւրը առ-

բաժնում են վոչ թե տերէնների, վողկուլզների և շիվերի ներսում, ինչպէս միլիոն, ալլ նրանց դրսի մասերի վրա և բոլջսի ներսի մասերը չեն մտնում:

Որդիումով կամ սեռով հիվանդանում են գըլ-
խավորապէս վազի կանաչ շիվերն ու վողկուլզ-
ները: Հիվանդութիւն տարածվելու համար ամե-
նեին հաքկավոր չե, վոր անձրե գա, կամ ցող
(շաղ) նստի վազի մասերի վրա: Բավական ե,
վոր ողի մեջ խոնավութիւն լինի և լեղանակը
տաք, վորպեսզի հիվանդութիւնը տարածվի:

Որդիումով հիվանդացած վազերի կանաչ
մասերի և վողկուլզների վրա առաջ են գալիս
մոխրագույն, փոշով ծածկված բծեր, վորոնք մա-
տով հեշտութիւնը սրբվում են: Իսկ միլիոնի
բծերի վրա առաջացած փոշին մատով չի սրբը-
վում:

Բացի դրանից, որդիումով վարակված մասե-
րից լեթե հոտ քաշենք, հոտած ձկան հոտ կըզ-
գանք: Որդիումով վարակված տերէնները հեշտու-
թիւնը թափվում են, իսկ պտուղները ճաքճըք-
վում, սկանում և չորանում: Դրա համար ել ո-
րդիումին մեղանում սե անունն են տվել:

Որդիումով հիվանդացած ճուղերի կամ շի-
վերի վրա լեւ սե բծեր են մնում:

Այս հիվանդութիւնը շատ արագ ե տարած-

վում և միջանի որվա մեջ կարող ե ամբողջապես հիվանդացնել մեծ տարածությամբ այգիներ, յիժե ժամանակին նրա առաջը չառնվի:

Լինում են տարիներ, յերբ այդ հիվանդությունն այգիների բերքի մեծ մասը վոչնչացնում ե, իսկ մնացած բերքը չի դիմանում պահելու համար և ստացված գինիներն անպետք ու հիվանդոտ են լինում:

Որդիումի դեմ բորդոյան հեղուկ չեն գործածում, վորովհետև նա չի ոգնում: Բժշկելու ամենից լավ և տարածված միջոցը ծծումբի փոշին ե (քուքուրդը), վորը վագերին փչում են հատուկ փուքսերով:

Ծծումբ փչելու համար կան հատուկ մեջքին հագնելու փուքսեր, վորոնք տորպեներ են կոչվում, վորոնցով մի մարդ կարող ե 1 որվա մեջ 2 հեկտարից ավելի այգի բժշկել:

Կան թեթև ձեռքի փուքսեր ծծումբ փչելու համար, բայց սրանցով գործը և դանդաղ ե առաջ գնում և չարչարանքը շատ ե:

Ծծումբ սրսկելու համար պետք ե ընտրել այնպիսի որ, վոր քամի չլինի, վորպեսզի ծծումբի փոշին հավասարապես փռվի թե վագի և թե հողի վրա: Քամի լեղած ժամանակ քամին տանում ե ծծումբի փոշին և ոգուտը քիչ ե լինում:

Բացի դրանից, ավելի լավ է ծծումբը փր-
չել առավոտները, յերբ դեռ այնքան ել օրը չի
տաքացել, իսկ յեթե վաղ առավոտյան ցող (շաղ)
է նստել, սպասել, վոր ցողն անցնի:

Շատերը ծծումբ սրսկելուց առաջ ջուր են
սրսկում, վոր ծծումբը կաշի տերևներին ու ճյու-
ղերին: Դա ըստ ըրողին ավելորդ է և անոգուտ աշ-
խատանք է, վորովհետև ուղիումի սպորներին
սպանողը վոչ թե ինքը ծծումբի փոշին է, այլ
նրանից առաջ յեկած գազը, վորը գոյանում է
արեգակի ազդեցության շնորհիվ:

Շատերը յերևի ծծումբից առաջ յեկած գա-
զի հոտը զգացել են այգիներում ծծումբ փչե-
լուց հետո, կեսօրվա տաք ժամանակ:

Դարնան և ամառվա ընթացքում ծծումբ
պետք է փչել 2—3 անգամ:

Առաջին անգամ ծծումբ պետք է փչել խա-
ղողը ծաղկելու ժամանակ, յերկրորդ անգամ
հունիսի կեսերին և յերրորդ անգամ հուլիսին,
յեթե հիվանդության նշաններ յերևան:

Բժշկությունը չպետք է ուշացնել և ան-
պայման իր ժամանակին կատարել, վորովհետև
ուղիումը մի անգամ յերևալով, շատ արագ է
տարածվում և առաջն առնելը այդ դեպքում
դժվար է լինում:

Մակային հիվանդությունների շատ տեսակ-

ները կան, վորոնք ուրիշ յերկրներում տարածված են և մեծ փնասներ են հասցնում խաղողի ալգիններին: Բայց մեզանում ամենից տարածվածները միլիոն և ոիդիոն են, վորոնց մասին մենք այստեղ խոսեցինք:

Բացի սնկային հիվանդություններից, կան նաև բազմաթիվ փնասատու միջատներ, վորոնք փնասում են խաղողի ալգիններին: Այդ միջատներից մեղնում տարածված են հուլիսյան կամ մարմարի բզեզը և քիչ չափով ֆիլոկսերան, վորոնց մասին միջանի խոսք կասենք:

V. ՀՈՒԼԻՍՅԱՆ ԿԱՄ ՄԱՐՄԱՐԻ ԲԶԵԶ

Այս բզեզը (բողոճ) հունիսի կեսերից ըսկըսած յերևում ե մեր ալգիններում և այն ել մեծ քանակությամբ: Նրանք թռչում են գլխավորապես յերեկոները, արևի մայր մտնելու ժամանակ մինչև մութն ընկնելը:

Սա մի մեծ բզեզ ե, մարմարի նման պըսպղուն մարմնով, յերկու տափակ և կեռ բևեռով և թևերի յերեսից բազմաթիվ սպիտակ պուտերով:

Հունիսի տաք յերեկոներն եգն ու վորձը թռչելով զուգավորվում են, վորից հետո եգ բզեզները խորանում են փափուկ հողի մեջ և ձըվեր դնում այնտեղ:

Միջանի ժամանակից հետո այդ ձվերից դուրս են դալիս փոքրիկ, փափուկ ու սպիտակ կոր վորդեր, վորոնք սկսում են կերակրվել զանազան բույսերի արմատներով և կամաց-կամաց մեծանալ և ուժեղանալ:

Մարմարի բզեզի վորդերը հողի ներսում ապրում են 3—4 տարի և ամենից շատ սիրում են կրծել խաղողի վազի արմատները: Այդ վորդերն ամենից շատ մլաս են հասցնում ջահել վազերին, երծելով նրանց ջահել արմատները և կտրելով վազը հենց արմատի բկից:

Մեր այգեգործներից շատերը գարնանն այգիները փորելու ժամանակ հանդիպած կլինեն այդ վորդին, վորը 3—4 տարեկան ժամանակ մատի հաստության ե հասած լինում, շատ դանդաղաշարժ ե, վեց վոտ ե ունենում և շատ ուժեղ գլուխ ու ժանիքներ:

Ահա այս փափուկ ու կեռ վորդն առաջ ե դալիս հուլիսյան բզեզի ձվերից և ահագին մլաս ե հասցնում մեր խաղողի այգիներին:

Նոր տնկած այգիներում, ամառվա կեսին շատ անգամ կարելի լե տեսնել, վոր շատ լավ բռնած և ուժեղ զարգացած խաղողի մատը հան կարծ սկսում ե թառամել ու միջանի որվա մեջ չորանալ: Յեթե այդպիսի մատը ձեռքով քաշեք, հեշտությամբ կհանեք և կտեսնեք, վոր արմատի բերանից կրծած ե ու կտրված:

Շատ անգամ այդ վորդերը վոչնչացնում են խաղողի նոր այգիների ամբողջ շարքեր: Հնացած վազերին նրանք բարեբախտաբար շատ վընաս հասցնել չեն կարողանում:

Այս չափազանց մլասակար վորդի դեմ կըռվելու կտրուկ միջոցներ մինչև այժմ չկան: Գըլխավոր միջոցն այգին փորելու ժամանակ սրանց հավաքել ու վոչնչացնելն է:

Բացի դրանից, հունիսի և հուլիսի ընթացքում կարելի չե վաղ առավոտներն այգիներում հեշտությամբ ժողովել բզեզներին, վորոնք առավոտյան ջրտի պատճառով խաղողի թփերի մոտ անշարժ ընկած են լինում:

VI. ՖԻԼԼՈՔՍԵՐԱ

Նաղողի վազի մլասատուներից ամենավըտանգավորը ֆիլլոքսերան է: Այս փոքրիկ, հասարակ աչքով հազիվ նկատելի միջատը մեզ մոտ է բերվել Ամերիկայից: Ֆրանսիայում, սկսած 1868 թվից ֆիլլոքսերան սոսկալի ավերածություններ է կատարել, 20 տարվա ընթացքում վոչնչացնելով Ֆրանսիայի 2 միլիոն հեկտարից ավելի այգիների կեսը:

Ֆրանսիայից ֆիլլոքսերան տարածվել է ուրիշ լերկերներ, իսկ հետո նաև մեր հարևան վըրաստան, ուր վերջին 10—15 տարվա ընթաց-

քում սկսել եւ ավերել իմերեթիայի եւ Քարթա-
լինիայի շրջաններէ խաղողի այգիները: Վերջերս
Ֆիլլոքսերան տարածվել եւ նաև Կախեթիայի եւ
Շուլավերի շրջաններում:

Վերջին տարիներս պարզվեց, վոր Լոռի-
Փամբակի գավառի Բարանայի շրջանում Ֆիլլոք-
սերա արդեն յերևացել եւ:


Ինչպես եւ տարածվում Ֆիլլոքսերան:

Ամեն մի այգեգործ պիտի իմանա, վոր Ֆիլ-
լոքսերան տարածվում եւ շատ հեշտությամբ, յե-
թե հիվանդ շրջաններից արմատակալած վագեր
կամ մատեր ենք բերում եւ տնկում մեր այգի-
ներում:

Բարանայի շրջանում Ֆիլլոքսերան առաջ եւ
յեկել հենց շնորհիվ այն հանգամանքի, վոր այդ
շրջանի գյուղացիներն իրենց այգիների համար
խաղողի մատեր բերել են Վրաստանից, ուր 15
տարուց ավելի յե, վոր Ֆիլլոքսերան գոյություն
ունի:

Դրա համար եւ դրսից խաղողի մատեր բե-
րելու դեպքում պետք եւ շատ զգույշ լինել, վո-
րովհետեւ յեթե Ֆիլլոքսերայով վարակված շրջան-
ներից մատ բերենք, մեր այգիները կհիվանդա-
ցնենք եւ միջանի տարուց հետո մեր խաղողի
այգիները կարող են իսպառ վոջնչանալ:

Ինքը՝ Ֆիլլոքսերան մի շատ փոքրիկ լվիճ ե,



վոշլից եւ շատ փոքր, համարյա աչքով անտեսանելի: Նա ապրուժ ե վազի արմատների վրա, հողի մեջ: Ապրելով արմատների վրա, Ֆիլլոքսերան ծծում ե արմատների հյութը, ուռույցներ ու վերքեր առաջացնում նրանց վրա ե միջանի տարվա մեջ ուժասպառ անելով վազը ե զրկելով նրան հողից նյութեր վերցնելու հնարավորութիւնից, չորացնում ե նրան:

Ֆիլլոքսերան շատ արագ ե բազմանում: Յեթե Ֆիլլոքսերայի մի լվիճն ընկնի վազի արմատի վրա: մի տարուց հետո նրանց թիվը միլիոնների կհասնի: Ահա թե ինչու այդքան վտանգավոր հիվանդութիւն ե Ֆիլլոքսերան ե դրա համար ե, վոր մենք միշտ զգուշացնում ենք մեր այգետներին—դրսից մատեր չբերել:

Ֆիլլոքսերայի դեմ կռիւն հիմնական միջոցը վարակված վազերի արմատից վոշնչացնելն ե: Մի անգամ տարածվելուց հետո, այլևս ազատվելու հնար չկա ե շատ յերկրներում Ֆիլլոքսերան մի տեղ յերևալուց հետո ստիպված են լինում ամբողջ խաղողի այգին հիմնովին վոշնչացնել:

Այդպես են արել որինակ Ղրիմում, յերբ արանից 20—25 տարի առաջ Ֆիլլոքսերան յերևացել ե ե այժմ Ղրիմում Ֆիլլոքսերա չկա:

Բայց հիմնովին այգին վոշնչացնել կարելի


յե, յեթե 1—2 հեկտար ե վարակված: Իսկ յե-
թե հիվանդութիւնը բռնել ե հարյուրավոր հեկ-
տարներ, այն ժամանակ պետք ե աստիճանաբար
այգիները վերանորոգել ե ամերիկական վագերի
վրա պատվաստած մատեր տնկել:


Ամերիկական վագերի միջանի տեսակներն
այն առավելութիւնն ունեն, վոր թեև Ֆիլլոք-
սերան կարող ե լինել նրանց արմատների վրա,
բայց փաս հասցնել նրա արմատներին չի կա-
րող: Ուրիշ խոսքով ամերիկական վագերի մի
շարք տեսակներ Ֆիլլոքսերային դիմանում են:


Յերբ արմատներն ամերիկական են, իսկ
վագի բունը տեղական, այն ժամանակ Ֆիլլոք-
սերան անվտանգ ե դառնում:

Այն յերկրներում, ուր Ֆիլլոքսերան շատ ե
տարածված, այժմ նոր այգիները տնկում են ամ-
երիկական վագերի ե պատվաստած մատերի
վրա:

ՏԵՍԻՍԿԱՆ ՏՆՔԵՍԵԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ









ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039908



[044]

ԳԻՆԸ 4 ԿՈՊ. ՄԱՍ. (3/4 մամուլ)

A $\frac{I}{4427}$



Իս. Թոր-Որսեյան

Болезни и вредители виноградной лозы

Госиздат ССР Армении
Эривань—1930